ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10

«Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ.17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի նիստի

2026թ-ի հունիսի 29-ին կայացել է մանկավարժական խորհրդի նիստ:
Նիստին մասնակցում էին մանկավարժական խորհրդի բոլոր 65 անդամները:

Օրակարգում՝

1. Մանկավարժական խորհրդի 2026 թվականի հունիսի 30-ի նիստի օրակարգի ներկայացում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
2. Մանկավարժական խորհրդի նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների վերաբերյալ զեկուցում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
3. IX դասարանի սովորողներին հիմնական կրթության վկայական տրամադրման հարց (զեկուցող՝ Լ. Մանվելյան)
4. Ուսումնական տարվա 2-8-րդ սովորողներին հաջորդ դասարան փոխադրվելու, վերաքննություններ ունեցող սովորողներին ամառային առաջադրանքներ տալու հարցը (զեկուցող՝ Լ. Մանվելյան)
5. Վերաքննությունների կազմակերպման հանձնաժողովի կազմի, ժամանակացույցի և թեստերի կազմման հարցի քննարկում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
6. Ներքին գնահատման արդյունքների ներկայացում և քննարկում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
7. Նոր ուսումնական տարում հնարավոր կառուցվածքային և կազմակերպչական փոփոխությումների ներկայացում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
8. Ներքին կարգապահական կանոնների նոր խմբագրության ներկայացում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
9. Այլ հաւցեր

Լսեցին՝

1. **Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատման մասին հաղորդումը (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):**

Տնօրենի ժ/Պ Ա. Գարեգինյանը ներկայացրեց մանկավարժական խորհրդի 2026 թվականի հունիսի 30-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 8 հարցից:

Լսեցին՝

2. **Մանկավարժական խորհրդի նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների վերաբերյալ զեկուցում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Տնօրենի ժ/պ Ա. Գարեգինյանը ներկայացրեց նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը՝ նշելով, որ բոլոր հանձնարարականներն իրականացվել են սահմանված ժամկետներում: Մշակվել են լրացուցիչ քննությունների համար նախատեսված քննական թեստերը, կազմակերպվել և իրականացվել են լրացուցիչ քննությունները, իրականացվել

է ներքին գնահատման գործընթացը: Ուսուցիչների կողմից վերանայվել են էլեկտրոնային մատյանները՝ ապահովելով մատենավարության պատշաճ իրականացումը, իրականացվել են ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկումները և տարեկան ամփոփման գործընթացը: Բացի այդ, տնօրենի տեղակալների, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների և մանկավարժների կողմից հաշվետվությունները պատրաստվել են սահմանված ձևաչափերով և ժամկետներում:

Միաժամանակ նշվեց, որ կազմված հաշվետվությունները տվյալ նիստում չեն քննարկվելու և չեն հաստատվելու, քանի որ դպրոցում առկա է վերաքննության ենթակա սովորող, որի ուսումնական արդյունքներից կախված է ուսումնական տարվա վերջնական ամփոփումը: Այդ պատճառով հաշվետվությունների քննարկմանը և հաստատմանը մանկավարժական խորհուրդին առաջարկում է անդրադառնալ օգոստոս ամսին՝ վերաքննությունների արդյունքների ամփոփումից հետո:

Լսեցին՝

3. **IX դասարանի սովորողներին հիմնական կրթության վկայական տրամադրման հարց (զեկուցող՝ Լ. Մանվելյան)**

Փոխտնօրեն Լ. Մանվելյանը նշեց, որ IX դասարանն այս տարի ավարտում է 9 (ինը) սովորող, որոնք հիմք ընդունելով վերջիններիս ծնողների (օրինական ներկայացուցիչների) կողմից ներկայացված դիմումները չեն մասնակցել պետական ամփոփիչ ատեստավորմանը: Հիմնական դպրոցն ավարտող սովորողներն են.

1. Բաբայան Անգելինա
2. Դալլաքյան Արման
3. Հայրապետյան Ժասմին
4. Մադոյան Ղարիբ
5. Մանուկյան Նարե
6. Մաթիլյան Նարեկ
7. Մելիքսեթյան Անժելա
8. Չախլասեան Էմանուէլ
9. Սանամյան Սարգիս

Լսեցին՝

4. **Ուսումնական տարվա 2-8-րդ սովորողներին հաջորդ դասարան փոխադրվելու, վերաքննություններ ունեցող սովորողներին ամառային առաջադրանքներ տալու հարցը (զեկուցող՝ Լ. Մանվելյան)**

Փոխտնօրեն Լ. Մանվելյանը հիշեցրեց, որ սահմանված կարգով ինտելեկտի (մտավոր) խնդիրներով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով իրականացված գնահատման հիման վրա՝ անկախ տարեկան գնահատականներից: Միևնույն ժամանակ

տեղեկացրեց, որ 2025-2026 ուսումնական տարվա ամփոփման արդյունքում 1-8-րդ դասարանների սովորողները, բացառությամբ 4-րդ Գ դասարանի սովորող Էլինա Սահակյանի փոխադրվելու են հաջորդ դասարան: Էլինա Սահակյանը 200 ժամից ավելի բացակայություն ունենալու պատճառով մայիսի 26-27-ը պետք է մասնակցեր կազմակերպված լրացուցիչ քննություններին, սակայն սահմանված օրերի մասին տեղյակ լինելով հանդերձ չի ներկայացել քննությանը և անհրաժեշտ է կազմակերպել վերաքննություն:

Լսեցին՝

5. **Վերաքննությունների կազմակերպման հանձնաժողովի կազմի, ժամանակացույցի և թեստերի կազմման հարցի քննարկում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անի Գարեգինյանը նշեց, որ սահմանված կարգի համաձայն վերաքննությունների առաջին փուլն իրականացվում է հուլիսի 2-ից 8-ն ընկած ժամանակահատվածում: Նշվեց, որ նպատակահարմար է վերաքննությունների կազմակերպման համար սահմանել երկու օր՝ հուլիսի 2-ը և 3-ը՝ ապահովելով սովորողների համար տարբեր օրերին տարբեր առարկաների քննություններ հանձնելու հնարավորություն: Միաժամանակ առաջարկվեց վերաքննությունների հանձնաժողովի կազմը հաստատել նույն կազմով, ինչ լրացուցիչ քննությունների կազմակերպման համար էր հաստատված:

Արտահայտվեցին

Տարրական դասարանների մասնախմբի ղեկավարը առաջարկեց, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մայիսի 27–28-ին նախատեսված լրացուցիչ քննությունների համար մշակված թեստերը նշված օրերին չեն կիրառվել՝ սովորողի բացակայության պատճառով, առաջարկվում է նույն թեստային նյութերը կիրառել նաև վերաքննությունների ընթացքում:

Լսեցին՝

6. **Ներքին գնահատման արդյունքների ներկայացում և քննարկում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանը ներկայացրեց ներքին գնահատման գործընթացի շրջանակում հավաքագրված և ուսումնասիրված տվյալները՝ անդրադառնալով արձանագրված ձեռքբերումներին և առկա խնդիրներին: Քննարկվեցին սովորողների առաջադիմությանը, կրթական գործընթացի կազմակերպմանը, ուսումնական միջավայրին և ուսուցման արդյունավետությանը վերաբերող հիմնական դիտարկումները:

Լսեցին՝

7. **Նոր ուսումնական տարում հնարավոր կառուցվածքային և կազմակերպչական փոփոխությումների ներկայացում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանը ներկայացրեց նոր ուսումնական տարում նախատեսվող հնարավոր կառուցվածքային և կազմակերպչական փոփոխությունները, դրանց անհրաժեշտությունը,

նպատակներն ու ակնկալվող արդյունքները: Քննարկվեցին ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, աշխատակարգերի բարելավման, դասարանների կոմպլեկտավորման և ներքին կառավարման գործընթացների հնարավոր փոփոխությունները:

Լսեցին՝

8. **Ներքին կարգապահական կանոնների նոր խմբագրության ներկայացում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանը ներկայացրեց ներքին կարգապահական կանոնների նոր խմբագրությունը՝ նշելով, որ դրանց վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված է կառավարման նոր համակարգի անցման և մի շարք իրավական ակտերի փոփոխություններով, այդ թվում՝ աշխատանքային օրենսգրքի՝ աշխատանքային պայմանագրերի կնքման մեխանիզմների, պաշտոնային պարտականությունների փոփոխություններով: Անդրադարձ կատարվեց հիմնականում փոփոխված կետերին, ներկայացվեցին նոր ձևակերպումները և դրանց մեկնաբանման և կիրառման առանձնահատկությունները՝ հետագայում տարընթերցումներից խուսափելու համար:

Լսեցին՝

9. **Այլ հարցեր**

Քննարկվեց անձնակազմի փոխհարաբերությունների ամրապնդման և համագործակցային միջավայրի զարգացման նպատակով մշակութային այցի կազմակերպման հարցը դեպի Սյունիքի մարզ՝ Տաթևի վանք: Նշվեց, որ նման նախաձեռնությունները նպաստում են թիմային համախմբվածության ամրապնդմանը, հաղորդակցման մշակույթի զարգացմանը և աշխատանքի արդյունավետության բարձրացմանը՝ ապահովելով մասնագիտական փորձի փոխանակում ոչ ֆորմալ միջավայրում:

Լսելով 2026 թվականի հունիս 29-ի մանկավարժական խորհրդի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1. Հաստատել մանկավարժական խորհրդի 29.06.2026 թվականի նիստի օրակարգը
2. Ի գիտություն ընդունել տնօրենի ժ/պ Ա. Գարեգինյանի կողմից նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը՝ արձանագրելով, որ սահմանված ժամկետներում կազմակերպվել են լրացուցիչ քննությունները, իրականացվել է ներքին գնահատման գործընթացը, ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկումներն ու տարեկան ամփոփումը, մատենավարության վերջնական ստուգումը, ինչպես նաև պատրաստվել են մանկավարժական աշխատողների տարեկան հաշվետվությունները:
3. Տնօրենի տեղակալների, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների և մանկավարժների կողմից պատրաստված տարեկան հաշվետվությունների

քննարկմանը և հաստատմանը անդրադառնալ մանկավարժական խորհրդի օգոստոս ամսվա նիստում՝ վերաքննությունների արդյունքների ամփոփումից և ուսումնական տարվա վերջնական արդյունքների հստակեցումից հետո:

4. 9-րդ դասարանն ավարտած սովորողներին, ինտելեկտուալ (մտավոր) խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունենալու հիմքով և ծնողի (օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ պետական ամփոփիչ ատեստավորմանը չմասնակցելու հանգամանքով, տրամադրել հիմնական կրթության վկայական՝ առանց քննական գնահատականների:
5. Հաստատել 2025–2026 ուսումնական տարվա ամփոփման արդյունքում 1–8-րդ դասարանների սովորողների հաջորդ դասարան փոխադրումը՝ բացառությամբ 4-րդ Գ դասարանի սովորող Էլինա Սահակյանի:
6. Սահմանված կարգով կազմակերպել 4-րդ Գ դասարանի սովորող Էլինա Սահակյանի վերաքննությունը:
7. Ստեղծել վերաքննություն ընդունող հանձնաժողով հետևյալ կազմով՝
    - նախագահ՝ տնօրենի ժ/պ Անի Գարեգինյան,
    - անդամներ՝ Խուբլարյան Ամալյա, Խաչատրյան Լուսինե, Տերտերեան Անի, Նավասարդյան Սյուզի:
8. Վերաքննությունները կազմակերպել հետևյալ ժամանակացույցով.
    - հունիսի 2-ին՝ Տեխնոլոգիա, Ֆիզկուլտուրա, Երաժշտություն, Մայրենի,
    - հունիսի 3-ին՝ Մաթեմատիկա, Ես և շրջակա աշխարհը, Կերպարվեստ, «Այլընտրանքային հաղորդակցում»:
9. Համաձայնել տարրական դասարանների մասնախմբի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել մայիսի 27–28-ին նախատեսված լրացուցիչ քննությունների համար նախապես մշակված, սակայն այդ օրերին չօգտագործված թեստային նյութերի կիրառումը նաև վերաքննությունների ընթացքում:
10. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն՝ արձանագրելով, որ ներքին գնահատման գործընթացի շրջանակում հավաքագրված և ուսումնասիրված տվյալների, ինչպես նաև արձանագրված ձեռքբերումների և առկա խնդիրների վերաբերյալ ամբողջական ամփոփ հաշվետվությունը ընդունված ձևաչափով պետք է պատրաստել և ներկայացնել օգոստոս ամսին:
11. Ընդունել ի գիտություն ներկայացված կառուցվածքային և կազմակերպչական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը:
12. Ընդունել ի գիտություն Ա. Գարեգինյանի կողմից ներկայացված ներքին կարգապահական կանոնների նոր խմբագրությունը՝ արձանագրելով, որ այն մշակվել է կառավարման նոր համակարգի անցման և մի շարք իրավական ակտերի փոփոխությունների հաշվառմամբ, այդ թվում՝ աշխատանքային օրենսգրքի, աշխատանքային պայմանագրերի կնքման մեխանիզմների և պաշտոնային պարտականությունների փոփոխությունների հիման վրա:
13. Հաստատել, որ ներկայացված նոր խմբագրությունը կարող է ներկայացվել կառավարման խորհրդի նիստին՝ հետագա քննարկման և հաստատման նպատակով:

14. Ընդունել ի գիտություն ներկայացված առաջարկությունը և համաձայնել անձնակազմի փոխհարաբերությունների ամրապնդման նպատակով մշակութային այցի կազմակերպման գաղափարին դեպի Սյունիքի մարզ՝ Տաթևի վանք:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ **Ա. Գարեգինյան**

Մանկավարժական խորհրդի քարտուղար՝ **Ա. Անդրեասյան**

01.07.2026